

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ
08.02.2014թ. խորհրդի նիստի

Նախագահ՝ Ֆ. Յուլակյան

Քարտուղար՝ Է. Հովհաննիսյան

Խորհրդի 24 անդամներից ներկա էին 18-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի ընտրության հարց:
Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան
2. ԳՊՄԻ-ի 2012-2013 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն:
Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան
3. ԳՊՄԻ-ի 2014 թվականի նախահաշվի հաստատում:
Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան
4. 1 հատ նոր ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու համար ԳՊՄԻ-ի 2014թ. նախահաշվում գումար հատկացնելու մասին:
Հաղ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան
5. ԳՊՄԻ-ի զարգացման ռազմավարական ծրագրի /2015-2019/ հաստատում:
Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան

Ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի պրոֆեսոր Ա. Բաղրամյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց փիլիսոփայության և հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր Ա. Մկոյանին վարել խորհրդի նիստը մինչ խորհրդի նախագահի ընտրությունը:

Ա. Մկոյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 18 անդամներ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. **ԼՍԵՑԻՆ.**- «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի ընտրության հարցը:
ԳՊՄԻ-ի խորհրդի նախագահի պաշտոնում անդամների կողմից առաջադրվեց ՀՀ Շիրակի մարզպետ Ֆ. Յուլակյանի թեկնածությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ա. Մկոյանը նշեց, որ Ֆ. Յոլակյանը ՀՀ-ում ճանաչված անձ է և առաջարկեց անցկացնել քվեարկություն ԳՊՄԻ-ի խորհրդի նախագահ ընտրելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Քվեարկության արդյունքում «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահ միաձայն ընտրվեց ՀՀ Շիրակի մարզպետ Ֆ. Յոլակյանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 18 անդամներ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Քվեարկությունից հետո Ա. Մկոյանը շնորհավորեց Ֆ. Յոլակյանին և նրան փոխանցեց նիստը վարելու իրավունքը:

2.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի 2012-2013 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն (Ձեկ.՝ ԳՊՄԻ-ի Ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան):

Ռեկտորի ներկայացմամբ՝ բուհի կառավարման գործընթացները հաշվետու 2012-2013 ուստարում միտված են եղել ուսումնական, գիտական և հասարակությանը մատուցվող այլ ծառայությունների շարունակական բարելավմանը: Բուհը, հավատարիմ մնալով իր առաքելությանը, հետևել է որոշակի նպատակների, մասնավորապես՝ իրականացնել որակի մշակույթի ձևավորմանն ուղղված քայլեր, ապահովել հարափոփոխ միջավայրին, ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան փոխանցելի գիտելիքներ և հմտություններ ունեցող շրջանավարտների թողարկում, նպաստել տրվող որակավորման աստիճանների մրցունակությանը և մատուցվող ծառայությունների թափանցիկությանը՝ բարձրացնելով բուհի գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը:

Ռեկտորի հաշվետվությունը վերաբերում էր բուհի ներքոհիշյալ հիմնական կետերին.

- կրթական գործունեության ընդհանուր բնութագիրը
- հասարակայնության հետ կապերին և լրատվությանը
- որակի ներքին ապահովմանը
- ուսանողների որակական և քանակական ցուցանիշներին
- պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմի որակական և քանակական ցուցանիշներին

- արտաքին կապերին և համագործակցությանը
- գիտական գրադարանի գործունեությանը
- ֆինանսական հաշվետվությանը /2013թ./:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանը, ՀՀ Շիրակի մարզպետ Ֆ. Յուլակյանը, ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի պրոֆեսոր Ա. Բաղրամյանը, ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Է. Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի 2012-2013 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 18 անդամներ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի 2014 թվականի նախահաշվի հաստատում (**Զեկ.**՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ-ի 2014 թվականի նախահաշիվը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 18 անդամներ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.ԼՍԵՑԻՆ.- 1 հատ նոր ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու համար ԳՊՄԻ-ի 2014թ. նախահաշվում գումար հատկացնելու մասին (**Հաղ.**՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի այժմյան «ԳԱԶ-3102» մակնիշի ծառայողական ավտոմեքենան ձեռք է բերվել 2006թ. օգոստոս ամսին և այս տարիներին, լինելով միակ ծառայողական ավտոմեքենան, կատարել է մոտավորապես 350 000 կմ վազք և ենթակա չէ հետագա շահագործման: Քանի որ վերջինիս վերանորոգման հետ կապված ծախսերը կապված են մեծ գումարի հետ, ինստիտուտի 2014թ. նախահաշվում 1 հատ նոր ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու համար հատկացնել նախատեսված գումարը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 18 անդամներ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի զարգացման ռազմավարական ծրագրի /2015-2019/ հաստատում (**Զեկ.**՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան)

Վ. Գրիգորյանը ներկայացրեց բուհի առաքելությունը և տեսլականը, կառավարման և վարչարարության, մասնագիտական կրթական ծրագրերի, ուսանողների, պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմի որակի բարելավման ուղիները և

կազմակերպության համար ռազմավարական նշանակություն ունեցող
այլ կողմեր:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ-ի զարգացման ռազմավարական ծրագիրը
/2015-2019/:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 18 անդամներ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նախագահ՝

Ֆ. Յոլակյան

Քարտուղար՝

Է. Հովհաննիսյան